լական կը համարի։ և թէ Ս. Կիպրիանոսի վկայութեան հաւատամք։ այդ սովորութիւնը ի գործ կը դրուէր Մկրտութեան միջոցին։ Քարոզէն վերջ ներկայ բազմաթիւ ժողովուրդէն շատեր մտնելով իրեն։ իրենց շնորհակալութիւնը յայտնեցին և շնորհաւորեցին զինքը ձեռք բերած յաջողութեանը համար։ Այս կրօնական հանդէսը փակուեցաւ Ներսէս վարդապետ Մկրտչեանի և Տ. Յակոբ քահանայի օրհնութիւններով։ Պ. Փանոսեան ամէն կիրակի պիտի շարունակէ եղեր իր աշխարհականի քարոզները։

— Երուսաղէմի վանքին Աղէքսանդրիոյ մէջ ունեցած կալուածները գնուած են արաբական 1254 թուականին։ Բէթրաքի Յովհաննէս անուն Հայէ մը 1800 եգիպտ. ոսկիի։ Այդ կալուածնկրը կը բաղկանան 41000 կանգուն տարածութեամբ ընդարձակ հողէ մը որուն մէկ մասին վրայ կառուցուած են խանութներ և տուներ։ Թուականէս չորս տարի առաջ յիշեալ Բէթրաքի Յովհաննէսի թոռները ու թոռնորդիները՝ «Ժառանգորդք Բիէռ Մէլիչի» օտարաձև անունին տակ դատ բացին վերոյիշեալ կալուածներու մասին։ յաւակնելով սեպհականութեան իրաւունք ունենալ անոնց ամբողջութեան վրայ։ Այդ «Ժառանգորդները» կը բաղկանան 16 անձերէ։ որոնց մէկը՝ անգլիացի տիկին մը։ 3 պելճիքացի։ մէկ աւստրիացի օրիորդ։ 2 գերմանացի։ 6 զուիցերիացի՝ 2 իտալացի և 1 տանիմարքացի։ Կատարեալ բաբելոնեան խառնակութիւն մը որուն մէջ Հայու նշոյլը։ հոտն անգամ չկայ։ Ուրեմն վաթսուն տարուան ընթացքին մէջ այդ սերունդը բոլորովին օտարացեր է։ զի Բէթրաքի Յովհաննէսի հայութիւնը բնաւ տարակոյս չի վերցներ։ ըստ որում Երուսաղէմի անունով շինուած հեօճէթին մէջ որոշակի նշանակուած է Բէթրաքի Եուանիս իլ Էրմենի։ այսինքն «Բէթրաքի Յովհաննէս Հայը»։

Դատը նախնական դատարանին մէջ շահուելէ յետոյ։ երեք տարիէ ի վեր Վերաքննիչ Ատեանին առջև կը ձգձգուէր։ բայց ահա այս անգամ թուականէս 2 շաբաթ առաջ։ դատարանը իր վերջնական վճիռը արձակեց ի նպաստ Երուսաղէմի վանքին։

Մէլիչի ժառանգորդները կուզէին հին հեօճէթներու ինչ ինչ անկանոնութիւններէն օգտուիլ և այս տեսակէտով գործը բաւական կնճռոտ հանգամանք ունէր։ այսու ամենայնիւ շնորհիւ քաղաքիս առաջնակարգ փաստաբան պ. Ալբերիք Լմուանի ջանքերուն և Խառն դատարանի դատաւորաց ուղղութեանն ու ողջմտութեանը։ Երուսաղէմի վանքը դատը շահեցաւ։ Խնդրոյ առարկայ եղած կալուածները կը ներկայացնեն այսօր 25000 անգլ. ոսկւոյ հարստութիւն մը։

—Պրիլիսէն հետևեալը կգրեն։—«Ժամանակէ մը ի վեր տեղւոյս թեմական գործերը անկերպարան վիճակ մը ստացած են։ Տեղացի ազգայիններէն շատեր կը փափաքին միացած տեսնել վանքերն ու եկեղեցիները։ յանձնուած շնորհքով խնամակալութեան մը ձեռքը։ Եթէ երբէք այս գեղեցիկ խորհուրդը իրագործելու ըլլայ։ ան ատեն։ շնորհիւ անձերի մատակարարութեան մը։ առաջնորդարանը բնաւ առիթը չպիտի ունենայ հասոյթի նուազութենէն գանգատելու։ Առանց այդ հասոյթներու չենք շնորհք մատակարարման ինչպէս կարելի պիտի ըլլայ լաւ վիճակի մը մէջ պահել տեղւոյս վարժարաններն ու որբանոցը։ Այս վերջին հաստատութիւնը մանաւանդ ամէնէն աւելի խնամքի առարկայ պէտք է դարձնել։ Եթէ երբէք վաղը միւս օր Պատրիարքարանը դադրեցնելու ըլլայ իր նպաստը։ գրեթէ ոչինչ պիտի ունենանք որով կարողանանք նիւթապէս ապահովել որբանոցին գոյութիւնը»։

— Վանէն նորէն կարօտութեան լուրեր կը հասնին։ Տաղվիրան գիւղը և շրջակայ քանի մը գիւղեր մանաւանդ շատ չքաւոր վիճակ մը ունին։ վիճակ մը զոր բարւոքելու համար Վանայ Առաջնորդարանը հազիւ կրցեր է հինգէն վեց շափ ցորեն ղրկել։ Վանայ ամերիկեան որբանոցին աշակերտները իրենց մէկ անգամի հացէն ինքզինքնին զրկելով 150 քաշ հաց նուիրեր են նոյն գիւղի մանուկներուն։

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՐԱՄԵԱՆ և Ս. ԱՆՆԱՅԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

1898/9 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՄԻ.

1898/9 ուս. տարուայ սկզբին Արամեան դպրոցում կային 87 աշակերտ։ ս. Աննայեան դպրոցում 63 աշակերտուհի (150)։ Նոր ընդունուեցան 38 աշակերտ և 23 աշակերտուհի (61)։ որով տարուայ սկզբում կային 125 աշակերտ և 86 աշակերտուհի։ ընդամէնը 211 աշակերտեալ։ որոնցից տարուայ ընթացքում զանազան ժամանակ հեռացան 7 աշակերտ և 2 աշակերտուհի (9 աշակերտեալ)։

Ահա աշակերտելոց տեղաւորութեան և փոխադրութեան ցուցակը։

Արամեան դպրոց					Ս. Աննայեան դպրոց			
Դասարաններ	Աշակերտ	Փոխուեցան	Մնացին	Հեռացան	Աշակերտուհի	Փոխուեցան	Մնացին	Հեռացան
I	20	15	5	»	20	16	4	»
II	26	18	7	1	23	18	4	1
III	26	22	3	1	15	11	3	1
Ա	20	13	5	2	18	8	10	—
Բ	14	9	4	1	10	8	2	—
Գ	11	8	2	1				
Դ	18	7	—	1				
Գում	125	92	26	7	86	61	23	2

Ուրեմն մնացած 202 աշակերտներից փոխուել են 153 (75,7 %)։ Բոլոր թոշակ վճարողների թիւն է 128 (ստացուել է 505,5 դահ.) ընդհ. թուի 64 %։

Դպրոցից գիրք ու տետրակ է տրուած հանգուցեալ Մնացական Տէր Յակոբեանի 10 որդեգիրներին. Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը 25 որդեգրի թոշակադրամ է վճարել, իսկ Ատրպատականի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութիւնը 10 չքաւոր երեխայի մի մի ձեռք հագուստ է բաշխել։

Ըստ ծննդավայրի 158 սոյն Բերդաթաղից էին, 25՝ շրջակայ գաւառներից, 18՝ հեռաւոր տեղերից (3 Աղբակեցի գաղթական) և 10՝ Լիլաւայից։

Ծնողաց պարապմունքին նայելով.

Վաճառականների, գործակատարների և մանրավաճառների զաւակ էին . .	107
Արհեստաւորների զաւակ . . .	46
Ծառաների	17
Անգործ և անյայտ անձանց . . .	11
Պաշտօնեաների	9
Օղեվաճառների	8
Գիւղականների	7
Ուսուցիչների	6
	211

Աշակերտելոց ընդունելութիւնը տեղի ունեցաւ 1898 օգոստ. 11-ին։ Պարապմունքներն սկսուեցան սեպտ. 3-ից, իսկ կանոնաւոր դասերը սեպտ. 15-ից. դպրոցական օրերը, թւով 210, տևեցին մինչև Յունիսի 1-ը քննութեան օրերն էին 11, այսպիսով 199 օր դաս է եղել. կիւրակի և տօն օրերի թիւն էր 65։

Անցեալ տարի ևս ուսուցչական խմբի մէջ չնչին փոփոխութիւններ եղան. պաշտօնավարում էին հետևեալ անձինք.

Պ. Նիկ. Տէր Օհանեան՝ ուսուցիչ հայոց լեզուի (Ար. Ա—Բ, և Անն. Ա—Բ), հայոց պատմութեան և բանահիւսութեան տեսութեան (Ար. Բ—Դ). շաբաթական 26 դասով (տարեկան 240 թ. ռոճիկ)։

Պ. Վահ. Բժշկեանց՝ ուսուցիչ բնական գիտութիւնների և թուաբանութեան (Ար. III Բ—Դ և Ան. III Բ), ընդհ. աշխարհագրութեան (Ան. Ա—Բ) և մարմնամարզութեան (Ար. Դ). շաբաթական 26 դաս (տարեկան 240 թ. ռոճիկ).

Պ. Լևոն Գէորգեան՝ ուսուցիչ ռուսաց լեզուի (Ար. Ա—Դ), թուաբանութեան (Ա. I—III) և ընդհ. աշխարհագրութեան (Ար. Ա—Բ). շաբաթական 28 դասով (240 թ. ռոճ)։

Պ Սարգիս Անդրէասեան՝ ուսուցիչ կրօնական առարկաների (Ար.—Դ և Ան. III—Բ), գիտողական ուսման (Ան. II—III), երգեցողութեան (Ար. III—Ա. և Ան. Ա—Բ) ու ձայնագրութեան (Ար. Բ—Դ), շաբաթական 27 դասով. այլ և շաբաթը երկիցս խմբական երգեցողութեամբ էր պարապում և եկեղեցում երգեցիկ խմբի կառավարիչ էր, շաբաթը մի դաս աւելի է պարապել (220 թում. ռ.)։

Պ. Գրիգոր Աղաջանեան՝ ուսուցիչ հայոց լեզուի (Ար. II—III), գիտողական ուսման (Ար. I—III), երգեցողութեան (Ան. I—III և Ար. II), Ընդհ. աշխարհագրութեան (Ար. Գ) և յունուարից ռուսաց լեզուի (Ար. III). յունուար ունէր 26 դաս. այնուհետև 29 դաս. (220 թ. ռոճ.). պարոնը դասերը սկսել է հոկտ. 5-ից.

Պ. Մել. Ճահրաղեան՝ ուսուցիչ թուաբանութեան (Ար. II—Ա), հայոց պատմութեան (Ան. Ա—Բ), գծագրութեան (Ար III—Ա և Ան. II—Բ.) և գրութեան (Ար Ա. և Ան. Ա—Բ). շաբաթական 28 դասով (տարեկ. ռոճ. 210 թ.)։

Պ. Կար. Յարութիւնեան՝ ուսուցիչ հայոց լեզուի և գրութեան (Ան. I–III), 28 դասով, նաև քարտուղար (200 թ. ռոճ.)։

Տիրան—խան Գալֆայեան՝ երթևեկ ուսուցիչ ֆրանսերէնի (Ար. Ա—Դ), 12 դասով (տարեկան 170 թ. ռոճ.)։

Տիկ. Հեղ. Փարրի՝ վարժուհի ձեռագործի, կարուձևի (Ան. I–Բ), 15 դասով. նաև վերակացուհի Ս. Աննայեան դպրոցի (168 թ. ռոճ.)։

Պ. Նիկող. Տէր Յովհաննիսեան՝ ուսուցիչ կրօնի (Ան. I—II և Ար. I—II), հաշուապահութեան (Ար. Ե), գծագրութեան (Ար. II) և գրութեան (Ար. II—III) 15 դասով, նաև վերակացու Արամեան դպրոցի. վաճառում էր և դասական պիտոյքներ (120 թ. ռոճ)։

Մ. Սադըղ—խան՝ ուսուցիչ պարսից լեզուի (Ար. III—Դ), 18 դասով (80 թ. ռոճ.)։

Երկսեռ դպրոցների տեսչութեան հետ ես

ունէր հայոց լեզուից և ընդհ. պատմութիւնից (Ար. Գ—Դ) շաբաթական 12 դաս (430 թուման ռոճիկ տարեկան):

Այսպէս, յիշեալ 12 ուսուցիչները աւանդում էին 10 դասարաններում շաբաթական 264 դաս (2 դաս. միացեալ), բացի դրանից շաբաթական 4 դաս մարմնամարզութիւնից կար, կէս կէս ժամերով, և 2 դաս խմբական երգեցողութիւնից: Եկեղեցում հանդիսաւոր պատարագներին երգում էր օրիորդներից և աշակերտներից կազմուած խումբը: Տղայոց և օրիորդաց նախակրթարանները դարձեալ միացած էին, ինչպէս և օրիորդաց Ա. և Բ. դասարանները մի սենեակում էին. այս տասը դասարանների մէջ տրուած դասերի գումարն էր 7538, առանց հաշուելու խմբական երգեցողութեան և մարմնամարզութեան դասերը:

Ինչ վերաբերում է ուսուցչաց պաշտօնավարութեան՝ ամէնքն առհասարակ համերաշխութեամբ, սիրով ու եռանդով էին կատարում իրենց պարտականութիւնը. բացակայութիւններ տեղի են ունեցել 232 դաս անձնական տկարութեան, ընտանեկան վշտի կամ ստիպողական արգելքների պատճառով. այդ բաց դասերի հաշուին նոյն կամ այլ ուսուցիչներն աւելորդ պարապել են 61 դաս, որով պարապած 7538 դասերից զուտ՝ իսկական բաց մնացած դասերի թիւն է, 174, հազիւ $3\frac{1}{2}$ օրուայ զբաղմունք:

Գ. պ. ուսուցիչները սիրով վարել են և դաստիարակչական պաշտօնը՝ հսկելով և ուղղութիւն տալով նաև ընթերցանութեան:

Դաստիարակներ ընտրուած էին ըստ այսմ՝

Աղջկանց դպրոց.

II. Պ. Նիկ. Տէր Յովհաննիսեանց
III. » Մել. Շահբազեանց
Ա. Պ. Ս. Անդրէասեան
Բ. Պ. Լ. Գէորգեան
Գ. Պ. Վ. Բժշկեան
Դ. Պ. Ն. Տէր Օհանեան

Ս. Աննայեան դպրոց.

I. Պ. Գ. Աղաջանեան
II և III միացեալ. Պ. Յ. Յարութիւնեան
Ա. և Բ. Տիկ. Փարբի:

Ուսուցչական խումբը պատրաստակամութեամբ մասնակցել է մանկավարժական խորհուրդներին, թւով 15, և զբաղուել է աշակերտելոց մտաւոր ու բարոյական յառաջադիմութեամբ և վարչական հարցերով, այլ և տեղի են ունեցել մօտ 10 մասնաժողովներ, որոնք զբաղուել են աշակերտական «յիշատակարանի» նիւթի մշակութեամբ և հանդէսների պատրաստութեամբ:

Մանկավարժական խորհուրդը օգտակար համարեց 99 թ. յունուարից աշակերտելոց ձեռքը տալ փոքրիկ կանոնագիրք «յիշատակարան» անուամբ, ուր հարկաւոր կանոններ են նշանակուած հանդերձ ցուցակներով և որ դիւրութիւն է տալիս արտաքին անձանց նկատողութիւնները վարչութեան հասցնելու:

Նոյն խորհրդի որոշմամբ դպրոցական հանդէս կատարուեցաւ Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց տօնին, և հասարակական հանդէսներով տօնուեցան Վեհափառ Հայրապետի անուանակոչութիւնը, Ս. Վարդանանց տօնը՝ Լիլավայի երկսեռ դպրոցների հետ միասին. իսկ ապրիլ 4-ին տեղի ունեցաւ երկսեռ դպրոցների տարեկան հանդէսը, հանդիսաւոր հոգեհանգստով և ուսում. հաշուետուութեամբ, այլ և բանախօսութիւն եղաւ ի յիշատակ Մտին ի վիրապն Ս. Լուսաւորչի:

Նոյնպէս մանկավարժական խորհրդի որոշմամբ ի նպաստ երկսեռ դպրոցներիս նորահիմն «մանկական գրադարանի» ապրիլ 9-ին գրական ու գեղարուեստական երեկոյթ տրուեցաւ, որից զուտ օգուտ մնաց 657 ռուբ. 40 կոպէկ. (հանելով երեկոյթի ծախքը 13,90 կոպ և ապառիկներից կորուստ 35 ռուբ.). Նորահաստատ «մանկական գրադարանը» 98/9 ուս. տարուայ վերջին ունէր 287 կտոր գիրք (հայերէն՝ 221 կտոր, ռուսերէն 66 կտոր. որոնցից 74 կտոր նուէր էր, մնացածը այստեղ ու Թիֆլիս գնած), այլ և պատրաստի՝ 849 ռու. 75 կոպ. դրամ, որի մի մասը գրքերի յատկացուեցաւ և միւս մասը բնագիտական գործիքների՝ մի կարիք, որ շատ զգալի է: Մանկ. գրադարանը ստանում էր Աղբիւր ամսագիրը, Արարատ՝ նուէր պ. Թովմաս Թումանեանից և Անահիտ՝ բժ. պ. Նոլանեանից. իսկ դպրոցն ստանում էր ,,Образованіе" ամսաթերթը:

Մանկավ. հոգաբարձական խորհուրդները տարիներէ ի վեր զգացուած պահանջին բաւականութիւն տալու համար որոշեցին Օր. Գ. դասարան և տղայոց Ե. դասարան աւելացնել, և որովհետև եկամուտների յաւելում չկար, ուստի և տղայոց ու օրիորդաց կրթարանները միացնելով՝ միջոց շահուեց օր. Գ. դասարանի համար, իսկ տղ. Ե. դասարանի համար պէտք եղաւ նպաստաւոր առթի սպասել:

Տեսուչ Ար. Ալէքսանեան